

է. կա Հայկադեանում ավելի նոր եղանակ, և նրան հոմանիշ է գրված λεῖψον:

Տ. Արաշտ. այս բառը մոռացված է հիշել նոր բառերի շարքում. գործածված է էջ 168. «Յորժամ հասարակ յով հին կամ օտար իցէ հին (*), որդան ձիաչար և մերարի». համապատասխան հույն բառն է πῶδοχαλκί, որ նշանակում է «ոտքի կապ». կազմված է πῶς πῶδος «ոտք» + χαλός «չար» բառերից: Ըստ այսմ հայ թարգմանն էլ կազմել է ձիաչար «ձիու ոտքի կապ», որի մեջ չար՝ թարգմանված է χαλκί ձևից:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ ՈՐԴԱՏ ԲԱՌԸ

Ամիրտովաթի «Օգուտ բժշկութեան» մեջ, գլուխ ՄԲ, գործ է ածված այս բառը. — երկու ձեռագիր ունին ուղղագ, մեկ ձեռագիր ուղղագի, մեկ ձեռագիր ուղղու և երկու ձեռագիր էլ սարգսսի: Մալխասյան (տես Օգուտ բժշ. ԼՁ 479 և հառաջաբան, էջ 17) գտնելով որ հայերեն նման բառ չկա և անհնելով որ խոսքը որթատնկի մասին է, ուղղել է այդ բառը ուրացնկի, և այսպես էլ մտցրել բնագրի մեջ, «չալէ՛ կրակով և քիչ մն որթատնկի (սխալ տպված ուղացնկի) մոխիր խառնէ և եվէ որպէս մորհամ»:

Ըստ իս ուրացնկի ուղղումը ճիշտ չէ: Ուղաց բառը կա հայերեն, միայն պետք է ուղղել ուղաց > ուղոս, այն է. ուրթոս, որ նշանակում է «որթատնկի յօտով կտրված ավելորդ ճյուղերը, որ վառելու համար են գործածում» (այն՝ ինչ որ երևանում կոչվում է աւբաւ): Այս ուրթոս բառը գործածական է մի խումբ բարբառներում. այսպես՝ Այնթապ, Բազարգեղ, Խարրերդ, Հաղոռ, Մաշկերտ, Չենկիլեր, Սթանուլ, Սիվրիհիսար, Տիգրանակերտ, Կղի (տես իմ Գավառական բառարանը, էջ 863): Անշուշտ ոչ մի մարդ էլ ամբողջ որթատնկը չի այրել, այլ միայն ավելորդ ճյուղերը կամ արքատները, որ է ուրթոս:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

В этих двух статьях автор уточняет значение девяти армянских слов: одно слово из Амир-Довлата--որգատ, а остальные из Теона--աղանդեալ, աղուն, աջմայա и т. д. Автор определяет значение этих слов-- первое посредством армянских диалектов, а остальные сравнительно с греческим подлинником.

Г. АЧАРЯН